

ՎԵՅՆԵՐՈՐԿ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 7 րուբլ, կէս տարվանը 4 րուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արասխանեանի խանութում

Օտարաբաղաբայիք դիմում են ուղղակի
Туф.мисс. Редакция „Мшак“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 արշապատ (Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՄՇԱԿ լրագրի ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ
լինելու է այն բաժանորդ-
ներին, որոնք այս ամբողջ տարվայ կամ
կէս տարվայ բաժանորդական գինը լիովին չեն
տուել խմբագրութեանը, շտապէն լրացնել
իրանց բաժանորդագիրը:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Մեր ինքնավարութիւնը, — Ն. Ե. Բ. ին տեսու-
թիւն, Թիֆլիսի առողջապահութիւնը, Նամակ
Բագուից: Ներքին լուրերը—Արտաքին տես-
ութիւն: Թիֆլիսի ֆրանսիայի Նամակ Թիֆլի-
քիայից: Արտաքին լուրերը—Յայտարարութիւն-
ները—Տեղեկացոյց:

ՄԵՐ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Ընթերցողի ուշադրութիւնը
դարձնելով ներկայ համարի ներ-
քին տեսութեան մէջ տրու-
ված «Թիֆլիսի առողջապահու-
թիւն» յօդուածի վրա, մենք մեր
կողմից չենք կարող չը յիշեցնել
մեր ընթերցողներին որ մենք շատ
անգամ խօսել ենք «Մշակի» մէջ այն
զարմանալի երևոյթի վրա, որ մեր
Գումաների մէջ բոլոր ուսաց
քաղաքներում ընտրվում են մեծ
մասամբ խոշոր ցէնզ ունեցող
ձայնաւորները, և ոչ թէ մանր
ցէնզ ունեցողները: Մենք մեր կող-
մից մեր Գումայի պատգամաւոր-
ների և քաղաքագլխի ընտրութեան
ժամանակ հրաւիրում էինք ընտ-
րողներին աշխատել գլխաւորապէս
քուէ տալ միջին և փոքր ցէնզ
ունեցող կանգնողներին:

Պարզ է որ մեծ զբաւաւերերը,
քաղաքային խոշոր կայուածատե-
րերը աւելի անհոգութեամբ են
վերաբերվում դէպի աղքատ դասի
պիտոյքները, բան թէ նոյն իսկ
քաղաքային միջին և ստորին հար-
կատու ժողովրդի ներկայացուցիչ-
ները: Բաղաբային ծանր հար-
կերը, կամ առաջին պիտոյքի
վճարների թանգութիւնը, քաղա-
քում տարածվող զանազան դիպ-
չողական հիւանդութիւնները այն-
քան զգալի չեն խոշոր գումարա-
տէրերին, քաղաքային մեծ կա-
լուածատէրերին, որքան միջին և
ստորին դասի աղքատ ժողովրդին,
աշխատող դասին:

Այն անձների թւում, որոնք
Բաղաբային Ինքնավարութեան
կանոնադրութեան զօրութեամբ ի-

րաւունք ունեն ընտրող լինել, ու-
րեմն և Գումայի ձայնաւոր ընտր-
ված լինել, կան այնպիսիներ որոնք
քաղաքին մեծ հարկեր են տալիս,
կան և այնպիսիներ որոնք շատ
աննշան հարկ են տալիս: Այդ
պատճառով բոլոր ընտրողները
բաժանված են երեք դասակարգի
վրա, — բայց երեքի ներկայացու-
ցիչներն էլ հաւասար իրաւունք
ունեն ընտրող և ընտրված լինե-
լու:

Օրէնքը, ուրեմն, այդ կողմից
ազատամիտ է, ի՞նչ ուրեմն մենք
ինքներս մեր սեփական օգուտը
աչքի առջև ունենալով, չենք աշ-
խատում ընտրել գլխաւորապէս
միջին և փոքր ցէնզ ունեցող, քա-
ղաքային գանձարանին քիչ վճա-
րող, աղքատ, աշխատող, արուես-
տաւորներից և մանր վաճառական-
ներից, կամ գործակատարներից
բաղկացած ձայնաւորներին, — ոչ ոք
չէ արգելում մեզ: Ո՞վ է մեղաւոր
որ մենք ինքներս չենք կատարում
մեր պարտաւորութիւնը, չենք
հասկանում որ աշխատող, աղ-
քատ, իր քրտինքով հացը ճա-
րող մարդը աւելի ընդունակ է
հասկանալ ամբողջի պահանջը, ցա-
ւակցել ժողովրդի, իր նմանների
կարիքներին, բան թէ հարուստը:

Մեր ընտրողների մեծ մասը
չեն կարող ազատվել դէպի հա-
րուստները ունեցած իրանց անձը
կաշկանդող պաշտելութեան զգաց-
մունքից: Մեր արուեստաւորը չի
ընտրի իր եղբոր արուեստաւորին,
մեր փոքրիկ վաճառականը քուէ
չի տայ իրան նման փոքրիկ վա-
ճառականին, — այլ երկուսն էլ կը
ընտրեն հարուստ, անուն ունեցող,
հարստացած, փողաւոր մար-
դուն, որ կամ ընտրվելուց յետոյ
տարին հազու մէկ երկու անգամ
կը յաճախէ Գումայի նիստերը,
կամ եթէ ճշդութեամբ յաճախէ
էլ այնքան ետական է, որ նորձ
չի ունենայ ըմբռնել ժողովրդի ա-
ռօրեայ, կենսական պահանջները,
ընդունակ չի լինի ցաւակցել ամ-
բողջի մեծ մասի կարիքներին:

Ի՞նչ փոյթ հարուստ ձայնա-
ւորին որ քաղաքում թանգութիւն
կայ, — այդ թանգութիւնը իրան
այնքան զգալի չէ, որքան աղքատ

մարդուն և այդ թանգութեան
անմիջիժար հետեւանքները նրա
աչքերին մատչելի չեն: Ի՞նչ փոյթ
ունեւոր, փողաւոր և խոշոր կա-
լուածատէր ձայնաւորին որ քա-
ղաքի առողջապահական անաջող
համաճանքների պատճառով տա-
րածված են զանազան վարակիղ
հիւանդութիւնները, — այդ հիւան-
դութիւնները աւելիչ ներգործու-
թիւն ունեն գլխաւորապէս քա-
ղաքի աղքատ, չբարձր ժողովրդից
բնակեցրած թաղերում, ուրեմն
այդ երևոյթները մատչելի չեն
նրան:

Յոյս ունենանք որ մեր Գում-
այի համար ձայնաւորների հե-
տեւալ ընտրութիւնների ժամա-
նակ մեր ընտրողները աւելի զգոյշ
կը լինեն իրանց բուէարկութեան
մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԱՌՈՂՋԱԳՆՈՒԹԻՒՆԸ

«Кавказ» լրագրի № 251-ի մէջ տպված է
մի նամակ խմբագրին—բժիշկ ստորագրու-
թիւնով, որ բուսական հետաքրքիր է, թէ
իբրև մասնագէտ բժշկի կարծիք քաղաքիս
առողջապահական դրութեան վրա և թէ
իբրև քաղաքային վարչութեան գործունէու-
թեան մի մասի քննութիւն: Խօսելով քաղա-
քիս առողջապահական դրութեան վրա պ.
բժիշկը ասում է, որ քաղաքում տարածված
է թէ տիֆի զանազան տեսակները և թէ
ճաղիկ հիւանդութիւնը: Ե՞տլ տուէք, պա-
րոն խմբագիր, ասում է հեղինակը, դարձնել
հասարակութեան ուշադրութիւնը այն վե-
տանգը մասամբ անփութելի է և մասամբ
կարելի է նրա առաջն անել, եթէ հասա-
րակութիւնը առանձին ուշադրութիւն կը
դարձնէ սկսվող ցաւի վրա: Մեր խօսքը տիֆի
և ճաղիկի զանազան տեսակների վրա է, որ
հսկայական քայլերով մտնում է մեր քաղաքը:
Նա կայ հիւանդանոցներում, զոհեր է խլում
հասարակութեան աղքատ դասակարգից և
շուտով երեւի կը սկսէ գործել և բարձր գա-
սակարգում: Եսկ ի՞նչ է արել քաղաքային
վարչութիւնը, հարցնում է պ. բժիշկը, այդ
ցաւի առաջն անելու: Եւ ինքը պատասխա-
նում է, որ քաղաքային վարչութիւնը ոչինչ
չէ արել, որ նա զբաղված է քաղաքիս առանց
այն էլ լուսաւորված մասի զգալով լուսաւո-
րելու հարցով, նոր փողոցներ բաց անելով
և զրանց նման անմեղ գործերով: Մենք չենք
ասում, որ այդ բաներով պէտք չէ պարա-
պել այլ կան հարցեր, որոնք աւելի արժանի
են ուշադրութեան, որոնց վճռելուց կախում
ունի յայտնված թշնամուն ընդդիմադրու-
թիւնը: Այդ հարցերի թւում են քաղաքի
մէջ կենսական պիտոյքների հետզհետեւ թան-

գանալը և փողոցների մաքրելը: Այդ հիւան-
դութեան մի տեսակը ի զուր չէ անուանվում
քաղցած տիֆ: Ժամանակ առ ժամանակ,
մարդկութեան պատմութեան տխուր րօպե-
ներում այդ հիւանդութիւնը տարածվում է
քաղաքների ամենաբնակեցրած փողոցները և
հնձում է աջ և ձախ անհամար զոհեր:
Խեղճի խրճիթից նա անցնում է հարուստի
պատար և այդտեղ էլ նոյնչափ ոչնչաց-
նում է: Քաղաքակրթված երկիրներում, շա-
րունակում է հեղինակը, գիտութեան շնոր-
հիւ կարողացան այդ հիւանդութեան ա-
ռաջն անել և այն քաղաքներում, որտեղ
տիֆի զոհերը 30—40% էր, այժմ նուա-
զել են 14—10%, գիտութիւնը ցոյց տուեց
այն աղբիւրները, որոնցից դոյանում է տիֆը,
դրա փողոցներում, բակերում և զանազան
տեղերում հաւաքված անմաքրութիւններն են,
որոնցից դուրս եկած հիւթը խառնվում է
գետնի տակ եղող ջրերի հետ, որոնք թափ-
վում են գետեր և աղբիւրներ և այդպիսով
դրանց վարակում են: Այդ տեղերից տիֆ
սկսում է իր ճանապարհորդութիւնը անից
տուն, փողոցից փողոց, քաղաքից քաղաք և
այն: Հարաւային եւրօպան գրիթէ յաղթեց
այդ հիւանդութիւնը, նա մաքրեց փողոց-
ները, աւելի հեռու չապահանված տեղերից
սկսեց առնել ջուր բնակիչների համար: Բացի
տրանից լաւ կերակրած ստամոքսը աւելի
հեշտ է պատերազմում այդ հիւանդութեան
դեմ, ուրեմն մթերքների գների բարձրանալը
մեծ աղբեցութիւն ունի հիւանդութեան տա-
րածվելու վրա: Այս բոլորը ի նկատի ունելով
ինչ է արել քաղաքային վարչութիւնը Թիֆ-
լիսի բարեւարութեան համար այսպիսի կրի-
տիկական րօպեում: Նշանակեց արդեօք քա-
ղաքային վարչութիւնը չափաւոր գներ մը-
թերքներին: Մաքրեց արդեօք նա քաղաքիս
կեղտոտ մասերը՝ Հուլաբարը, Վէյրանը, Չու-
ղուրէթը: Ծուեց արդեօք բնակիչներին գո-
նեա մէկ վեղթօ մաքուր ջուր, որ Հուլաբարի
կամուրջի կամ Մետեխի տակ չը լինէր առ-
նված: Լայնացրեց արդեօք քաղաքի այն
մուտք, մտայլ փողոցները, որտեղ մինչև ան-
գամ ցերեկով կարելի է ոտը կոտրել: Մի
խօսքով թեթեւացրեց արդեօք քաղաքային
վարչութիւնը նոյա վիճակը, որոնք կարտու-
թիւն ունեն լաւ կերակուրի, մաքուր ջրի և
թարմ օդի: Ոչ և ոչ, նա, քաղաքային վար-
չութիւնը ոչինչ չարեց: Ամենից աւելի է, որ
գումայի օրակարգի հարցերի թւում է մը-
թերքների թանգութեան հարցը, իսկ դու-
ման չէ մտածում ծանր քննել այդ հարցը:
Նա այդ հարցը միշտ յետաձգում է, կարծես
իբ ուշադրութեան արժանի չէ, չը լինի թէ
նրա համար, որ պ. պ. ձայնաւորների հա-
մար թանգութիւնը այնքան զգալի չէ, որքան
օրական 40—50 կ. աշխատող խեղճի համար:
Թող չը մտանան, վերջացնում է պ. բժիշկը,
որ այդ հարցը նոյնպէս իրանց անձնապաշտ-
պանութեան հարց է, և գուցէ ուշ կը լինի
գործել, երբ անողք հիւթը կը մտնի նրանց
տները և կը խլէ սիրելի բարեկամներին և
ընկերներին... «Тифл. Вѣстн.» լրագրից, որ-
տասուպելով այս յօդուածը ասում է իր կող-
մից, որ թանգութիւնը նախատեսել շատ
դժուար չէր: Ամենքին յայտնի էր, որ նա-
հանգները պէտք է լրվին զօրբերով, որ բո-
լոր տեղափոխելու միջոցները պատերազմական
գործերի համար հարկաւոր կը լինին. դը-
ժուար չէր այս ամենը նախատեսել և դրս

առաջն առնելը Յիշույ լրագրող աւելացնում է բացի սորանից, որ յունիսի 16-ի Կանոնադրութեան համեմատ քաղաքների հասարակական վարչութիւնների համար ընտրող ներկայացուցիչները մեծ մասամբ խոշոր սուրբ սուրհներ են, ճայնաւորները մեծ մասամբ բարձր դասակարգից են ընտրուում, և դումաներին այն բնաւորութիւն են տալին, որը ճշմարիտ վերոկենցում է նամակի հեղինակին:

ՆԱՍՄԱԿ ԲՍՈՒՄԻՅ

Նոյեմբերի 20-ին

Բազում Կովկասի քաղաքներում համարեա առաջին տեղն է բռնում թիֆլիսից յետոյ իր առեւտրով Ռուսաստանի Պարսկաստանի, միջին Ասիայի և Տաճկաստանի առեւտրական կենդրոնական սահմանակցութեամբ: Նրա դիրքը Կասպից ծովից յանկարծ բարձրանում է մի բլուրի վրա, որտեղ շինված է հին բերդաքաղաքը, ճրանից դէպի արեւելք և հիւսիս հարթ, հաւասար երկիր է, ծովի մակերևոյթից հողի 4 սառնէն բարձրութեամբ: Այդ տարածութեան վրա կառուցված են շատ ընտիր շէնքեր, այդ մասը կոչվում է դրսի կամ նոր քաղաք: Քաղաքից դէպի հարաւ Կասպից ծովն է, որ ներկայացնում է բնական ամենազեղեցիկ նաւահանգիստ: Կատարեալ կիսաբոլորակ լճակ, իսկ դէպի արեւմուտք սարեր են: Այս վերջին տարիները դրացի քաղաքներից շատ գերեզմանատաներ տեղափոխվում են Բագու և այդ է պատճառներից մէկը, որ շինութիւնների գինը օրից օր բարձրանում է, Բագուի տանտէրերը սովորութիւն ունեն տները ներքին հարկում խանութներ շինել: Այսպիսի փոփոխութիւնը կը գտնէք խանութներ շինած, որ յոյս չը կայ, թէ երբ և իցէ այդ տեղերը առեւտրական կամ արհեստական գործերի համապատասխան լինեն: Հասկանալի է, որ այդ աւելի ձեւում է, սակայն եթէ թանկ ևս նստեն տըները, այնու ամենայնիւ իսկոյն կը վարձվեն, ուրիշն դորանով աւելի կը շահնեն տանտէրերը: Բագուն երկու փոքրիկ պարտեզիկներ ունի մէկը հին քաղաքի արեւմտեան կողմն է, իսկ միւսը նոր քաղաքի ծովափերի մօտ է: Այդ երկու տեղերում չարախիթ երկու յայտնի օրերում կարելի է նշմարել ամեն տեսակ զբօսողներ մինչև ժամի 2-ը կէս գիշերից յետոյ: Այդ զբօսարարների մասին միտնարական ոչինչ չեմ կարող պատմել, մասնաւոր այն պարտեզի մասին, որ քաղաքումն է և կոչվում է Միսայեան: Սա այն քան փոքրիկ տեղ է բռնում, որ միջի զբօսողները աւելի տանջվում են, քան թէ զբօսում: Այդ այգին մեծացնելու հնար չը կայ, իսկ միւս պարտեզի համար խօսելը աւելորդ եմ համարում: Բագուի շուկան, այդ հասարակաց կենսական մթերանոցը, նոյն է, ինչ որ լինում է առհասարակ ասիական քաղաքներում, զանազանութիւնը այն է, որ Բագուն զրկված է բնական մթերքներից և ստանում է այլ քաղաքներից: Ի հարկէ դրանք չեն ունենում այն թարմութիւնը, ինչ որ կանանային իրանց անած տեղերում: Միւս բաները, որոնք պատրաստվում են առհասարակ տեղական թուրքերի ձեւքով, մեծ մասամբ կեղծ են լինում: Եթէ գնում էք կաթը հաստատ իմացեք, որ նրա կէսը շուր է, միւր հիւանդ անասունի է և այլն: Այս ամենն էլ վաճառողները ծախում են շատ զովիստներով: Տեղական ոտիկանութիւնը աշխատում է այս վատութիւնները արմատախիլ անել, բայց այդ նրան չէ աջողում, որովհետև վաճառողները գիտեն յարմարվել ամեն տեսակ դրութեան: Որինակ շուկայի պատերի վրա կայցնում են յայտարարութիւններ, որտեղ նշանակված են գները: Առնելու ժամանակ դիմում են վաճառողին, սա նշանակած գնով չէ տալիս: պէտք է զանգատել: Բայց որովհետև գործը մի քանի կօպէկի է, չեմ ուզում ժամանակ կորցնել, այսպիսով վաճառողները ինչ ուզում են, այն են անում: Այժմ յոյս ենք դրել քաղաքային ինքնավարութեան վրա, որը, ինչպէս ձեզ յայտնի է շուտով մեր քաղաքն էլ մտցնվելու է: Կեկտեմբերի 6-ին արդէն ճայնաւորների ընտրութիւն է նշանակված և յոյս կայ, որ գործունայ երիտասարդներ կը նարվեն: Բագուի քաղաքները շատ անյարմար են շինած, բացի այն, որ գրեթէ ժամերով պէտք է սպասել, որ հերթը սպասողին հասնի, բացի այդ անյարմարութիւնը, շուրջ երբեմն տաք է լինում և երբեմն շատ ցուրտ, այնպէս որ այս հանգամանքը շատ հիւանդութիւնները պատճառ է լինում: Ծառերից կը լսէք,

որ դրանց հիւանդութեան պատճառը բազմաթիւ է եղել: Փոքր գեր չեն խաղում կենսական կողմից և մեր հիւանդոցները: Արիւմ նշանաւոր հիւանդոցներ ունենք: Եւրօպա և Կովկաս: Առաջինում ամեն բան շատ թանկ են ծախում, գուցէ այն պատճառով, որ տունը թանկ է վարձած, իսկ երկրորդում առանձին ուղարկութիւն չեն դարձնում պաշարի թարմութեան վրա, իսկ այս հանգամանքը մեծ նշանակութիւն ունի հիւրանոցը յաճախողների համար: Պաշարին տուած մի քանի աւելորդ կօպէկը առանձին նշանակութիւն չունէ հիւրանոցի տիրոջ համար, բնութեանակը դա օգտաւէտ է, որովհետև յաճախողների թիւը կը շատանայ Տեղական կլորում նոյն են անում, ինչ որ ամեն գաւառական և նահանգական քաղաքային կլորներում: Պէտք է շուտով անցնել այդ կանաչ սեղանների մօտից, եթէ ոչ մէկը կարող է տարվել և մեր օտը վատ համարել: Մտենք Բագուի եկեղեցին, այդտեղ կը տեսնենք, եթէ կիրակի կամ տօն օր է, Բագուի հայ հասարակութիւնը: Գեղեցիկ սեռը հազնված է համեմատ վերջին սօղալի ամենքի հագուստները միաձև, միատեսակ չապր են, կարծես այդտեղ հարուստ և աղքատ չը կայ, կարծես բոլորը մի դասակարգի մարդիկ են: Այս իրողութիւնը մի հիւանդութիւն է, որից ոչ մի բնականապէս չէ վաճառականները չունեն որչ ժողովատեղի, ինչտեղ պատահում է հաւաքվում են և իրանց գործերը մասին դատում: Մասնաւոր վատ է դրանց այն կողմը, որ նախ լաւ չեն վարվում իրանց արկիւղայիկների հետ և երկրորդ դրանց շատ քիչ վարձատրում: Ի հարկէ արկիւղայիկների մէջ էլ կան այնպիսիներ, որոնք իմանում են յարմար բոլոր գտնել և իրանց գրպանները լցնել պատրօնի հաշով: Եթէ մի հայեցքը գցենք տեղական ընտանեկան կեանքի վրա կը տեսնենք, որ բագուցի օրերը մեծ մասամբ դառնում է լաւ տանիկին և լաւ մայր: Նա իմանում է կարգի դրել իր ընտանեկան գործերը, խնամում է նոյնպէս զատարակի և իր սիրելի զաւակը: Այ թէ միայն բարձր դասի, այլ և միջին դասի կինը իմանում է զբաղեցնել իր հիւրերին: Միայն կրկնում եմ, որ նորաձեւութիւնը մեր կանանց համար հիւանդութիւն է դարձել: Բագուի բնակիչների անտեսական դրութիւնը բաւական ապահոված լինելով, դրանք յետ չեն մնում ոչ մի քաղաքից բարենպաստի գործերում: Այստեղ անպար լինում են թէ հայերէն և թէ ռուսերէն սիրողներ ներկայացուցիչներ բարեգործական նպատակով, ունենք մարդասիրական ընկերութիւն և եթէ մի ստորագրութիւն է լինում՝ Բագուն միշտ մի նշանաւոր դուռն է տալիս: Կարող եմ ասել, որ ոչ մի հասարակական գործ չէ լինում, որին բագուցից չը մասնակցեն, միայն ցանկալի կը լինէր, որ ամենքը մասնակցէին և մասնակցողները քաղ չը բաւականանային: Հետեւեալ անգամ կը գրեմ Բագուի մէջ գտնվող ընկերութիւնների մասին:

Ա. Զ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Тифл. Вѣст.» լրագրում կարդում ենք, որ շուտով պ. Գ. Ն. Սօկոլով կը կարգայ թիֆլիսի ՍՈՒՄ մի քանի դասարանութիւններ «Կասպից ծովի, նրա հիւսիսային մասի ձկնորսութեան վրա, բացի Ուրալ գետից»: Աւելորդ է ասել, աւելացնում է յիշեալ լրագրը, որ այդ հարցի մշակելը մեծ նշանակութիւն ունի մեր երկրի համար: Գասարանութիւնները կը լինեն Անդրկովկասեան Կիւրաբանաստանական ընկերութեան մէջ:

Նոյն լրագրը լսել է, որ օրերը Անդրբիվիսի սպանման յայտնի գործը կը քննվի փետրվարի 3-ին թիֆլիսի նահանգական դատարանում:

Թիֆլիսի Կուսակցի նստում նոյեմբերի 24-ին ճայնաւոր Սիմէոն Պետրոսեան Աւաղաթով առաջարկեց Կուսակցին յայտնել իր ցաւակցութեան զգացմունքը գեներալ Արծրաւուն մահից պատճառով: Կուսան ընդունեց պ. Աւաղաթովի առաջարկութիւնը և ուղարկեց գեներալ Արծրաւուն ժառանգներին հետեւեալ բովանդակութեան թուղթը քաղաքապետի ստորագրութեամբ: «Գժբաղդութիւնը որին դուք ենթարկվեցաք խոր կերպով ցաւեցրեց քաղաքային ազգաբնակչութիւնը, որ դեռ շատ ժամանակ չէ յանձնած էր ձեր հանցուցեալ հօրը մեր քաղաքի բարորութեան մասին հոգեւորը: Նորա պէս հասարակական գործող կիրուսող չէր կարող չը յարուցանել ընդհանուր ցաւակցութեան զգացմունքը և քաղաքային Կուսան նոյեմբերի 24-ին կայա-

ցած նիստում, ճայնաւոր Սիմէոն Պետրոսեան Աւաղաթովի առաջարկութեամբ, միաձայն վերջուց յայտնել իր խորին ցաւակցութիւնը ձեր ունեցած կորուստի մասին: Հաղորդելով ձեզ Կուսակցի այդ վճռի մասին, ես չեմ կարող իմ կողմից չաւելացնել որ կատարեալապէս բաժանում եմ նոյն անկեղծ զգացմունքները: Ընդունեցէք և այլն: Կիւրաբան Կիւրաբան:

Առաջանք յօգուտ գաղթականների 6 բուբլ, որից 3 բուբլ տիկին Լուցիա Մարտիրոսեանից և 3 բուբլ տիկին Թագաբուլ Կոստանայից: Երկու տիկիններն էլ թիֆլիսում են բնակվում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՒՄ

Բերում ենք այն նամակի բնագիրը, որ ստացել է «Times» լրագրի Կ. Պոլսի թղթաւորը, 29-ից նոյեմբերի: «Times» լրագրի թղթաւորը խօսքերով վերոյիշեալ նամակը գրել է մէկ այնպիսի մարդ որ մօտիկ յարաբերութիւն ունի Օսմանեան կայսրութեան բարձր աստիճանադիրների հետ: Այստեղ մենք սկսում ենք աչքերը բաց անել և տեսնել մեր թշուառութիւնների ծանրութիւնը: Մեր զինուորական պատերը, հայրենասիրութիւնը և մեր կրօնի հաւատարմութիւնը փրկված են, բայց մեր գործը մենք կորած ենք համարում: Մեզ համար, ի հարկէ, կարող են լինել և աջողակ վայրկեաններ, մենք կարող ենք դեռ ևս մեր թշնամունք արժան չը նստեցնել նրա առաջ գնալը, բայց մենք գիտենք, որ այլ ևս ոյժ չունենք դրա յաւաճարիմութեան արգելք դնելու: Մեր միջոցները սպառված են, մեր գանձարանը դատարկ է, մեր պաշարը վերջացած է և մեր զինուորները հաստատ գիտեն, որ զրկանքների և մահի հանդէպ են գտնում: Քանի որ Ղարաբ պաշտպանվում էր, բաւական արի էինք մենք, բայց այդ արիութիւնը ընկաւ Ղարաբի պատերի հետ և թշնամին մեծերով այս պատերի մէջ, մահի հարուած տուեց մեզ: Պէ՛հնան պաշտպանվում է մինչև այժմ հերոսային յուսահատութեամբ և երզուում էլ կամենում է թշնամու առաջ գնալուն արգելել: Բայց այս տողերը ձեզ մօտ հասնելուց վաղ, այս երկու բերքերն էլ Ղարաբ վրձակին կենթարկվեն, Օսման-փաշան կամ կը յաղթվի կամ կը սպանվի, և Մուստափափաշան այլ ևս չի մեծարվել «յաղթող» տիտղոսով: Ուրեմն ի՛նչ է մնում մեզ անելու: Եւրօպան թողեց մեզ, չէ, նա աւելի վատ վարվեց, նա դատապարտեց և մասնեց մեզ, որովհետև մենք մահը գերադասեցինք աօթից: Զբաւորութիւնը տարածվել է մեր մէջ և մեր տները ամենաճանաչ անկեղծներումն էլ լավում են միայն կանանց գանգատներ և ծերերի անէճքը: Բայց ի՛նչ կարող ենք այժմ անել: Հէնց որ մեր վերջին յոյսը կանհետանայ, երբ որ Աղրիանսօղը ճանապարհին վտանգ կը սպառնայ, երբ էրզուումը, որին մեր ամբարձրները չեն կարող բաւական պաշտպանել, լքնկնի, այն ժամանակ մենք կը գնանք մեր յաղթողը հանդէպ և խաղաղութեան պայմաններ կառաջարկենք, բայց միայն նրա հետ: Պ. Կայարը, ի դուր կը սկսի բացատրել մեզ, որ մենք իրաւունք չունենք այդպէս վարվել, որ մենք այն շահերն ենք պաշտպանում, որ բոլորովն մերը չէ: Մենք չենք լսի նրան: Եւրօպան ոչինչ չէ կարող պահանջել մեզանից, մենք այլ ևս չենք կամենում նրան ճանաչել, մենք ճանաչում ենք միայն մեր թշնամուն և մեր անձնական պաշտպանութիւնը: Ներկայ ժամանակում ռուսները այն մարդիկ են, որ ամենից քիչ են ատում մեզ, այն, ինչ որ նրանք կամենում են, մեզ միշտ յայտնի էր, որովհետև նրանք երբէք այն չէին ծածկում և չէին խաբում մեզ մեր

յոյսերի մէջ: Այսպէս անուանված ընդհանուր շահերը—նրանք են, որոնք ամենից քիչ են վերաբերում մեզ: Կարգանքը և Բօսֆօրը մեզ համար բոլորովն մեծ նշանակութիւն չունեն: Երբ ռուսները Աղրիանսօղին կը մօտենան, մենք աւելի կը նախապատուենք Բօսֆօրը նրանց տալ և չենք թողնել, նրանց Կ. Պոլսի վրա գնալ: Մենք կաղանք մեր տերութեան Եւրօպական մասը և աւելի լաւ կը համարենք ռուսների հովանաւորութեան տակ մնալ, քան թէ յոյս դնել երեւակայական պաշտպանների վրա, որոնք ձեռքերն են ծալում մեր մահից անպաշտպանի ժամանակ: Ռուսաստանի հովանաւորութիւնը աւելի անկեղծ կը լինի, երբ նա կը հասնի այն պայմաններին ինչ որ մտադիր է մեզ վրա դնել: Մենք մէնակ էինք կուռում—մէնակ էլ կը խօսենք խաղաղութեան պայմանների վրա: Մեզ ատում են որ այդ վարմունքով մենք երկապառ կը կոչենք: Մեծ բան չէ, մենք այնքան ոյժ չունենք որ կարողանանք երկապառ միշտ մեր աւատական իշխանութեան տակ պահել: Բայց մենք շատ լաւ գիտենք որ Եւրօպան մեզանից էլ պակաս ոյժ ունի: Կերտանիստ կը յանձնէ մեզ ռուսներին: Նա վճարում է, մեր հաշուով, իրան երկապառիտութեան վարձը Ռուսաստանին: Աւստրիան ոչինչ բանի վրա չի հոգայ, եթէ նրան կը վարձատրեն թիւրք մարմնի կտորներով, բայց նրա անհաջ ցանկութիւններն վերջ կը գրվի: Ֆրանսիան դեր էր խաղում ռուսաց քաղաքականութեան մէջ քանի որ ճայն ունէր այս գործի մէջ: Այժմ նա ոչինչ չէ խօսում, որովհետև նրան էլ ոչ ոք չէ լսում: Իտալիան հսկում է Աւստրիային: Նա ևս սպասում է որ մի բան ստանայ և սպասում է Աւստրիային թէ կըր այս վերջինը մէկ պատշաճաւոր պատճառ կը տայ իրան: Այս երկու ազգերը մի անգամ վրէժ կառնեն միմեանցից մեր պատճառով: Իսկ ինչ որ վերաբերում է Անգլիացիներին, մենք ներկայումս ամենից շատ նրանց վրա ենք բարկացած: Մենք նրանց ռուսներից աւելի ենք ստում և անհամեմատ կը գերադասեցինք ռուսների նաւատորմը տեսնել Բօսֆօրում, քան թէ Անգլիացուց նաւատորմը: Ռուսները շատ լաւ գիտեն որ նրանք երբէք չեն կարող Կ. Պոլսի մօտեւ: Աւելի հաւանական է, որ մենք ինքներս կայրենք նրան և հրդեհի լուսով կանցնենք Բօսֆօրի միջով: Եւ այս կարելի է անել շատ արագ, Ստամբուլից մինչև Բէրա և Բէրայից մինչև Կալատայ իւրաքանչիւր կը կայցնի օրան իր ձեռքը: Զր կարծէք որ այս տողերը գրել եմ ես յուսահատութեանից: Ոչ, մենք այս ենք մտածում, մենք այս ենք ցանկանում, մենք այս կանենք և կը տանենք մեզ հետ համազմունքը և յոյս որ վաղ թէ ուշ, մենք Ասիայի սրտիցը աւելի սոսկալի կը լինենք Եւրօպայի համար, երկուս Եւրօպայի համար, քան թէ այժմ մեր մայրասերը կը վերադառնան և մինչև անգամ կարելի է և յաղթութիւնը: Բայց աւաղ, Ես այլ ևս չեմ հաւատում այս բանին, և այլ ևս ոչ ոք այստեղ չէ հաւատում գորան:

ՏԻՒՆՍԻՍ

Ինչպէս «Temp» լրագիրը հարբուում է, Հէրցօգ Օդիֆրէ-Պակիէ, ղեկավարների Զին (նոյեմբերի 27-ին) ընդունվեցաւ մարշալ Մակ-Մահօնի մօտ: Օդիֆրէ-Պակիէ հազել թէ կարողացաւ հանրապետութեան նախագահին մի քանի խօսք ասել: Մակ-Մահօնը ընդմիջեց նրան, նկատողութեամբ Աւելորդ է այս բանի մասին խօսել: Սենատի պ. նախագահ: Ես այդ բանին վճռողական որոշում տուեցի: Միմիստութիւնը կազմակերպված է

արդէն: Եւ ոչ համաձայնութիւն եւ կամե-
նում եւ ոչ խաղաղութիւն եւ մտադիր եւ
գործը մինչև վերջ տանել: Հերցոգ Օդիֆորէ-
Պակիէ շատ վրդովեցաւ այս բանը լսելով եւ
պատասխանեց. «Ա, մարշալ, ես շատ ցաւում
եմ այն բանի վրա, ինչ որ դուք ինձ ասա-
ցիք: Ես ուղարկված էի ձեզ մօտ իմ բարե-
կամքների կողմից եւ մինչև անգամ կարելի է
ասել սենատից, աղաչելու ձեզ ազատել
Յրանական նրան սպառնող թշուառութիւն-
ներից: Ես հեռանում եմ ձերանից յուսահատ,
որովհետեւ դուք իմ խնդիրներն ոչինչ ուշա-
գրութիւն չը գարծիրէք: Այն սարսափելի պա-
տասխանատուութիւնը, որը դուք ձեզ վրա
էք ընդունում, սարսափեցնում է ինձ:»

Մարշալ Մակ-Մահոն Օդիֆորէ-Պակիէի հետ
խօսելու ժամանակ, յայտնեց որ նա աւելի
լաւ կը համարի հրատարական տալ քան թէ
կրկին դիմել Նիւֆորին նոր կարկնէտ կազմե-
մելու առաջարկութեամբ: Այս բանը աչքի ա-
ռաջ ունենալով, հանրապետականները խուսիք,
որին առաջնորդում է Օդիֆորէ-Պակիէ բնակա-
նապէս պէտք է մտածէր որ կարող է հան-
րապետութեան նախագահի տեղը դատարկ
մնալ: Այդպիսի դէպքում երկու պայտաներ
եւս պէտք է միանային, ժամանակաւորապէս
մարշալը յաջորդը ընտրելու համար, մինչև
սեպտեմբերի վերջը: Բայց այդ բանը հեշտ չէր
կարող լինել: Վարձեւտային իրեր կանխորատ
չէր կարելի առաջարկել այս բանի մասին,
պարտաւնտական բոլոր խումբերը համաձայն
են միմեանց հետ: Ընտրութիւնը միայն պա-
լատի երկու նախագահների վրա՝ Օդիֆորէ-
Պակիէի եւ Նիւֆորի վրա է տատանվում: Այնու-
ամենայնիւ հանդէս են բերում մէկ ուրիշ կան-
գիղատ եւս, Օմալեան հերցոգին, որը շատերի
կարծիքով կարող է եւ ընտրվել: Բայց այդ
բանի վերջը կախված էր լինէր հանրապե-
տականների փոքր խմբից սենատում, որը ոչ մի
կերպով նրան Նիւֆորի նախագահ չէ կարող
համարել: Իսկ միւս երկու կանգնողների
ընտրութեանը կը հակառակվէին բնապար-
տիտները, չենք ասում այն, որ լեգիտիմիտա-
ներն էլ կը հրատարակէին Օմալեան հերցոգին
պաշտպանելու: Աչքի առաջ ունենալով այս
բոլորը, շատ կարելի է, որ հանդէս դուրս
գալ գնեւերալ Նանզին, որի մասին մէկ ան-
գամ խօսակցութիւն կար, որպէս սպառազ
նախագահի վրա: Վենետիկ Նանզին կապակ-
ցութիւն ունի, ինչպէս ձախակողմեանների
հետ նոյնպէս կենդանականների հետ եւ շատ
հնարաւոր էր նրան ընտրել եթէ արմատա-
կանների խումբի նախապաշարումն չը վնաս-
էր նրան, որոնք զենուորականներից նոր նա-
խագահ ընտրելուն հակառակ են:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

Եւզոպիա, 31 հոկտ. 1877

Տեսնելով որ «Մշակ» լրագիրն իւր ազդեցութեամբ
էջեր նուրբած թուրքաբանի հարստահարուած
հայերին, նոցա ողբերի արձագանքն կը տա-
րածէ բոլոր աշխարհի մէջ եւ պաշտպանութիւն
կը խնդրէ իւր թշուառ ազգի համար, ես հա-
մարձակեցայ այս նամակ գրել ձեզ Եւզոպիայէն
եւ խնդրել որ մի տեղ չնորհէք հայրենասուէր
«Մշակ» մէջ:

Անտարակոյս ձեր ընթերցողներ սարսափե-
լով կարողացին Վանի մէջ եղած հարստահարու-
թիւններն, բայց մեք որ Եւզոպիայի մէջ անգամ
այգպիսի սարսափելի հարստահարութիւններ կը
կրկնու, կերակայինք թէ Վանի մէջ հայերի
կրած թշուառութիւնն ձեր հրատարակածէն սր-
ջափ աւելի ծանր կը լինի ի հարկէ, քանի որ Կ.
Պոլսէն Եւզոպիա ձանապարհն մի շարքի չափ
կը տեւէ: Իսկ մինչև Վանի մի ամիս:

Եւզոպիան գործութեան թօքաւ կանուանեն,
ժողովը Հայաստանի անուանի քաղաքներէն մին
է. Վանասի սահմանակից: Սամսոնէն 5 եւ Ամա-
սիան կամ Մարզուանէն 2 օրի չափ հեռի կա-
րուանի գնացքով:

Հազար երկու հարիւր տունի չափ լուսաւոր-
չական հայ կայ Եւզոպիայի մէջ, 260 տունի չափ

հուովեական հայ, ե 5=6 տուն այ բողոքական
հայ: Մի քանի հարիւր տուն յոյներ կան, հրէա-
ներն շատ քիչ են: Իսկ թուրքերն քրիստոնէսա-
ներէն երկու անգամ աւելի բազմաթիւ են:

Հայերն ունեն 7 եկեղեցի, նաև 2 վանք քա-
ղաքէն մի քանի ժամ հեռաւորութիւնով: մի կե-
ղոնական ուսումնարան ուր ծախքերն պար-
տաւոր են հոգալ 7 եկեղեցիներն: Այդ եկեղե-
ցիների մէջ կան ծաղկոց կոչուած պատրաս-
տական վարժարաններ ուր աւարտած աշակերտ-
ներն կերթան կեղոնական ուսումնարանն: Մի
քանի երիտասարդներ վարդուհեան անունն ըն-
կերութիւն կազմած եւ մի օրիորդական վարժա-
րան բացած են ուր ձրիապէս կը դասախօսեն:
Այդ վարժարանի պաշտպան հանդիսացած են
վիճակաւոր առաջնորդն Յակոբ եպիսկոպոս ձըզ-
նաւորեան եւ տիկին Մարիկա Գատէմեան որ մի
ազգասէր եւ ուսումնասէր կին է եւ Եւզոպիայի
մէջ ամենէն աւելի յայտնի եւ նշանաւոր եղած
Ալանեան գերդաստանէն է:

Ընտրութեական եւ բողոքական հայերն, ե յոյ-
ներն եւ հրէայներն ալ իւրեանց յատուկ մի եկե-
ղեցի եւ մի վարժարան ունին: Այստեղ բողոքա-
կան հայերն այնչափ սառնութիւն ցոյց չեն
պար դէպի մեր ազգային գործեր որչափ հուով-
մեականներն: մինչև անգամ աշխատութիւնով
կը մասնակցին մեր ազգային գործեր, նուիրա-
տութիւններ կանեն որչափ կը ներէ իւրեանց
տրութիւն, իւրեանց աղկիկներ կուղարկու մեր
վարդուհեան վարժարանն եւ նոր ազգականու-
թիւնն եւ խնամութիւն կը հաստատեն անխտիր
կերպով: մինչև հուովեական վարդապետն չը
թոյլ տար հուովեական հային պատկուի լու-
սաւորչականի հետ երբ սա չընդունի հուովեա-
կան կրօնն:

Թուրքերն ունին բազմաթիւ մզկիթներ յորոց
մի քանին հին եւ նշանաւոր շինուածներ են եւ
մին ալ երբեմն հայի եկեղեցի է եղեր: Բայց
թաղական վարժարաններն ունին մի կեղոն-
ական վարժարան ողորմելի դրութիւնի մէջ,
սորա ծախքեր կը հոգայ կառավարութիւնն:

Եւզոպիայի դաւաճան ազգային գործերի համար
իւր յատուկ վիճակաւոր առաջնորդն եւ ազգային
ժողովներն ունի: բայց քաղաքականապէս կա-
տուկ ունի Սեբաստիան (Սուաղ) նահանգապե-
տէն:

Եւզոպիան պղծագործութիւնի մէջ Թուրքիայի
ամենէն անուանի քաղաքն է:

Ընթերցողն կրնայ իմանալ այս տեղեկութիւն-
ներով թէ Եւզոպիան (Թաքատ) Փոքր Հայաս-
տանի ամենայայտնի եւ ծաղկած քաղաքներէն
մին է: բայց եւ այնպէս այդ քաղաքի մէջ թուր-
քերն ամենահամարձակ եւ բացարձակ կերպով
ստակալի նախատեսքներ եւ հարստահարութիւն-
ներ կանեն քրիստոնէսայներէն:

Մեծ Հայաստանի մէջ քուրդերն, Փոքր Հա-
յաստանի մէջ ալ չէրբէզներն մեր վրա կար-
ծես թէ յատկապէս իբր պատիժ դրած է թուրք
կառավարութիւնն որպէս զի անզոգար կողոպ-
տելով, հարստահարելով եւ ճնշելով թոյլ չը տան
որ հանգիտ չունչ աւուտնը:

Թուրք բաշխողութիւններն եւ չէրբէզներն Եւզ-
ոպիայի հայաբնակ գիւղերէն մի քանին կողոպտե-
ցին, շատ կիներ եւ օրիորդներ անպատուեցին:
Արտովաի մէջ մի հայ սպաննեցին, Տէրվէտի
ճանապարհին վրա տասի չափ զօրքեր յարձա-
կելով Չանիկեան Գեղոզ անուն երիտասարդին
վրա, բոլորովն կը կողոպտեն եւ քրիստոնէս-
կան կրօնին դէմ ստակալի հայօրութիւններ անե-
լով կը ձեռնէն չարաչար եւ կուղեն մորթելով
սպաննել: բայց երիտասարդն կը յաջողի ձեռնէն
մեռած ձեռնալ եւ կազատի:

Թէ քաղաքին մէջ եւ թէ չըմեկայներն գողու-
թիւններ, մարդասպանութիւններ, առեւանգու-
թիւններ այնքան շատ կը պատահին, որթթէ
ամեն օր որ մանրամասնօրէն գրեն ձանձրա-
ցուցիչ կը լինի:

Ալիւրի գինն չափազանց բարձրացած լինե-
լով, փուռներն մի քանի օր քիչ հաց շինեցին
այնպէս որ բազմաթիւ ժողովուրդ փուռներն
ասելի չարուած, կը սպասէին որ հաց գնեն: Եւր-
ճեան Յովհաննէս անուն երիտասարդն մի փուռի
առջև երկար ժամանակ սպասելէ յետոյ վերջա-
պէս կը յաջողի հաց գնել իւր ընտանիքի համար:
Այնտեղ գտուող թուրքերն որք յետոյ եկած էին
կը յարձակին վրան եւ ակց, ինչ համարձակու-
թիւն, քանի որ մուսուլմանն կը սպասէ, գեա-
վուրն յանդիմն հաց գնել ասելով չարաչար կը
ձեռնէն այնպէս որ դիակի պէս չնայսպառ գե-
տին կը փուռի: բայց թուրքերն այդ չափով ալ
զոճ չեղած, փողոցի քարերին վրա քաշքաշելով
զայն դիակի պէս, կը տանին՝ Վայնազամին եւ
բանտարկել կը տան: Ինչ զարմանալի կառա-

վարութիւն որ մի անմեղ մարդ հրապարակի
վրա ձեռնուելով գրեթէ դիակ կը դառնայ իսկ
նա փոխանակ զայն պաշտպանել կը բանտարկէ,
Թճախճեան Յովհաննէս անուն երիտասարդն մի փուռի
առջև միջոցին համարձակել էր թուրքերի գլխու-
թիւնն խնդրել այդ ձեռնուող երիտասարդի վրա,
ինք ալ սաստիկ կերպով կը ձեռնուի:

Հայեր կը վախեն այժմ իւրեանց զաւակներ
դպրոց դրելով զի թուրքերն փողոցներին մէջ կը
բռնեն կը ձեռնեն: Մի անգամ մի խումբ սրկիայ
թուրքեր դպրոց մտնելով, դասատուն բունի
քաշեցին դուրս հանեցին եւ ստիպեցին կաֆէ-
տունն երթալ եւ դաշնակ (առածոյիքա) ածելով
զուարճացունել զիրենք:

Երեք ամիսի չափ առաջ թուրքի տղայներ մի
խումբ կազմած, սուրեր իւրեանց ձեռք, սկսան
չըլիլ քաղաքին մէջ եւ իբր թէ ոգևորել մահմե-
տականներն: Գայմազամն անգամ կը քաջալե-
րէր այդ մանկական զինուած խումբ: Սոքա կը
յարձակին քրիստոնէսայների տուններին վրա, կը
քարկոծեն եւ կը կոտորեն ապակիներն, փողոց-
ների մէջ քրիստոնէսայ կիներն եւ աղայներն կը
ձեռնեն: Կառավարութիւնն կը լսէ եւ կը տեսնէ
այս ամեն, բայց լուռ եւ անտարբեր կը մնայ:

Այդ տղայներէ բաղկացած խումբ քաջալե-
րուելով, հետոյճետ էր մեծանայ եւ պատանիներ,
երիտասարդներ ալ կը միանան իւրեանց հետ:
Սոքա կը յարձակին մեր ազգային դպրոցի վրա
եւ մի աշակերտի ճակատ կը պատուեն: Տեսուչն
կը բողոքէ քայմազամին, բայց զուր զի նա չու-
զեր լսել:

Երկու օրէ յետոյ դարձեալ կը յարձակին զըպ-
րոցին վրա: Տեսուչ եւ դասատու պ. Գեթրգ փաս-
պանեան իւր աշակերտներ կրցածին չափ կը
պաշտպանէ եւ մի թուրք տղայի ձեռքէն սուրն
խել եւ դաշնագամին տանել ուղեւոր չարաչար
կը ձեռնուի: Յետոյ թէ կը դարձեալ կը բողոքէ
քայմազամին բայց դարձեալ զուր: Թուրքերն
աւելի կը կատարին այդ բողոքների վրա եւ մինչև
անգամ մի թուրք պաշտօնատար չուկային մէջ
կը պոռայ թէ «ինչ այդ չափ իրար անցած կը
բողոքէք: մի քանի օր ալ սպասեցիք, բոլոր
զեափուռներն պիտի կտորները, մեր տղայներ
մի քանի օր առաջ սկսեր են մեր անելիք գործ.
աւելի լաւ: ե այն ե այն»:

Մի քանի օր յետոյ երկեղոնեան ժամանակ
դարձեալ կը յարձակին դպրոցին վրա երբ աշա-
կերտներն կարճակուէին իւրեանց տուն: Գա-
սատուն պ. փասպանեան իսկոյն աշակերտներն
դպրոցէն ներս տանելով կուղէ փակել դուռն:
բայց հասակաւոր թուրքերէ բաղկացած մի
խումբ որ արդէն պատրաստուած են եղեր այն-
տեղ, բերեր իւրեանց ձեռք կը յարձակին դա-
սատունի վրա եւ այնպէս սաստիկ կը ձեռնեն որ
ամեն մարդ յուսահատած էր նորա կեանքէն:
բայց, փառք Ստեղծողին, բմիկների խնամքով
այժմ աղաւած է մահէն, երկար ժամանակ ան-
կողին: մէջ ցաւազին տառապելէ յետոյ, իսկ
այս անօրինակ յարձակութիւն անող թուրքերն
անպատիժ կը չըլին փողոցներն, հպարտանալով
եւ մեծամեծ սպառնալիքներ անելով քրիստո-
նէսայներին:

Մի քանի օր յետոյ յոյների դպրոցին վրա ալ
յարձակելով, քարկոծեցին, պատուհաններն խոր-
տակեցին եւ ամեն անկարգութիւններ արին:

Աւելորդ կը համարիմ յայտնել թէ բաշխո-
ղուք զօրքերն երբեմն եկեղեցիներն ալ կը քար-
կոծեն, կանպատուեն, եւ այլն: Եստ երկար կը
լինի ամեն բան մանրամաս գրել: ես կը վեր-
ջացունեմ նամակ, յայտնելով թէ մեր դուռ-
թիւն արդէն ողբալ է եր, իսկ այժմ ստակալի
եղած է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

— Հեռագիրը հաղորդում է Փարիզից զեկտեմ-
բերի 1-ից (13-ից) որ Մակ-Մահոն մարշալը ըն-
դունեց Օդիֆորէ-Պակիէ հերցոգին: Հետեւեալ
օրը նա տեսակցութիւն ունեցաւ Գիւֆօրի հետ:
Կազմուած է միմիտութիւն Գիւֆօրի նախա-
գահութեամբ:

— Գիւֆօրի միմիտութիւնը կազմված է. Նա
բոլոր կուսակցութիւններին հաճելի է: Յրան-
սիական «Journal Officiel» լրագիրը հրատարա-
կել է նոր միմիտութեան անունները, որոնք են
Գիւֆօր միմիտութեան նախագահ եւ արարութեան
միմիտար, Մարտէր Ներքերի գործերի միմիտար,
վաղ ինչպէս որ արտաքին գործերի, Բար-
դու ժողովրդական լուսաւորութեան, Բօրէլ
զինուորական, Պօտիւս ծովային, Լէօն Սէ
Ֆիլանսների, Տէսերակ առևտուրի, Յրէ-
սին է հասարակաց աշխատանքները միմիտար:

— Յրանսիական նոր միմիտութիւնը առա-
ջին նիստ ունեցաւ Մակ-Մահոն մարշալի նա-
խագահութեամբ:

— Կ. Պօլսից հեռագրում են, որ զեկտեմբերի
1-ին (13-ին) սուլթանը բաց արա թիւրքաց
պարլամենտի նիստերը:

— Հեռագիրը հաղորդում է, որ թիւրքաց լրա-
գիրները Պէլլեայի ընկնելու լուրը իմանալով,
յայտնում են ցանկութիւնը որ պատերազմը շա-
րունակվի մինչև վերջին միջոցները:

— Թիւրքաց պարլամենտի բազման ժամանակ
սուլթանի գահի ձառի մէջ յիշված է բոլոր թիւր-
քիանպատակներին հաւատար իրաւունքներ տա-
լու անհրաժեշտութիւնն եւ ճառը հրատարուած է
մի եւ նայն ժամանակ բոլոր հպատակներին նուի-
րատուութիւններ անել յօղուտ պատերազմի:

— «Journal des Debats» լրագիրը ասում է որ
անգլիական տէրութիւնը ամեն միջոցներ է գործ
դնում, որպէս զի մեծ պետութիւնները միանան
եւ միջամտութիւն անեն պատերազմող պետու-
թիւններին մէջ:

— Կարծում են, որ ֆրանսիական դեսպան Կ.
Պօլսի մէջ կը նշանակվի Կարվիլ, իսկ Բերլինի
մէջ Երվալիէ:

— Սուլթանի փառալուստ հասար. Կ. Պօլսի:

— Անգլիական «Morning Post» լրագիրը յայտ-
նում է որ հասել է այն բազէն, երբ տէրու-
թիւնը պէտք է իր վերջը տայ ներկայ պատե-
րազմի հանգամանքները մասին: Անգլիական
չանքը, լրագիր կարծիքով, վտանգի մէջ են,
Լօնդոնում լուրեր են տարածված, որ իբր թէ
անգլիական տէրութիւնը դիտարորութիւն ունի
յայտնել ուսուսաց տէրութեանը թէ Թիւրքիայի
դէմ պատերազմի շարունակելը մինչև զարուճը
կարող է ստիպել Անգլիային խառնվել պատե-
րազմի մէջ:

— Լուրեր են տարածված Անգլիայում, որ իբր
թէ անգլիական տէրութիւնը կարողութիւնն է
արել պատրաստել երեք հարիւր հազար կոչիկ-
ներ զօրքի համար:

— Կրիտեան կղզու ապստամբները պահանջում
են որ կղզին միանայ Յունաստանին: Բէտեմ-
նօյի մէջ կայացած միտինգի ժամանակ յայտն-
վեցաւ Կրիտեան կղզու անկախութիւնը, կղզու
քրիստոնէսայ ազգաբնակչութիւնը կազմեց ազ-
գային ժողով եւ այդ ժողովի մէջ ընտրեց զինու-
րական պետներին:

— Կ. Պօլսից հաղորդում են որ Թիւրքիան հե-
տեւելով Լայարդ անգլիական դեսպանի խորհրդ-
ներին, կամենում է ուղարկել եւրօպական պե-
տութիւնների մօտ իր նախարկներին, առաջար-
կելով պետութիւններին երաշխաւոր լինել Թիւր-
քիայի մէջ վերանորոգութիւնների իրադրման:

— Սերբիան յայտնեց պատերազմ Թիւրքիային
եւ արդէն սերբիական զօրքերը վեր առան Պօ-
կոպլիէ եւ Կուրչուպլիէ:

— Սերբիական զօրքերը վեր առան սուրբ
Նիկոլայի լեռնային անցքը եւ Չիլէկի մարտ-
կոցը:

— «Köln. Zeitg.» գերմանական լրագիրը հե-
տեւելով հեռաքերի տեղեկութիւններէ հաղոր-
դում Եւրօպայում պատերազմող ուսուների եւ
թուրքերի զօրութեան մասին: — Արեւմտեան
Բուլղարիայի զօրքը, իչխան կարլոսի առաջնոր-
դութեան տակ, հասնում է 119,000 մարդ, 558
թիւղանօթներով: Կուրչուպլի վրա զօրքը ունի 10,000
մարդ, 50 բերդի թիղանօթներով: Բալկանեան
կամ հարաւային զօրքը գնեւերալ Բաղէջիւ իչ-
խանութեան տակ 30,000 մարդ, 120 թիղա-
նօթներով, արեւելեան Բուլղարիայի զօրքը թա-
ղաժառանգի հրամանատարութեան տակ 73,000
մարդ 242 թիղանօթներով իսկ Կօրուրդի զօրքը
գնեւերալ Յիմլիւանի առաջնորդութեան տակ
38,000 մարդ եւ 240 թիղանօթներով: Ընդամենն
է 270,000 մարդ եւ 1352 թիղանօթ: Սրանց զի-
ւացը մինչև վերջերուս դրուած էին, հաշուած
թէ անկանոն զօրքերը եւ թէ բերդերի տեղա-
պահ զօրքերը, միասին 266,000 թուրք, 594
թիղանօթներով: Արեւմտեան Բուլղարիայի զօրքը
97,000 մարդ 132 թիղանօթներով, արեւելեան
Բուլղարիայի զօրքը 141,000 մարդ 386 թիղա-
նօթներով եւ Բուսնիլայի զօրքը 28,000 եւ 76
թիղանօթներով: Այս զօրքերը բաժանված էին
հետեւեալ կերպով: Վիդինում 6000 Ամէդի-փա-
չայի կառավարութեան տակ, Լօմպալանկում
3000 անկանոն զօրք, Նիշայում Ֆաղլի-փաչայի
առաջնորդութեամբ 7000, Սօֆիայում Մէմէդ-
Ալի-փաչայի հրամանի տակ 6000, Օրիանիա-
յում, Եակիր-փաչայի հրամանի տակ 20,000,
Պէլլեայում Օման-փաչայի հրամանի տակ
30,000, Երկրայի վրա, Ամէդի-փաչայի հր-
րամանի տակ 16,000, Կազանիկում Հուսէին-
բէգի հրամանի տակ 3000, Տրօսանում 5000,

Խանքի և Տվարիցում 2000, Բուչուկում Ան-
մէզ-կայգէրի-փաշա 10,000, Երևանում, Թա-
հիր-փաշայի հրամանի տակ 10,000, Վարնայում
8000, Սիխարայում 8000 և արևելեան Բու-
զարիայում գործող զօրքը 99,000: Այս թուա-
նշանները վերջերս փոքր ինչ փոխուել են,
որովհետև Մէնէզ-Ալի-փաշան, ինչպէս լսվում է
հաւաքել է Օրխանիայի, Էտրօպօլի և Չլատիցի
մօտ 32 բառայիւն, 12 էսկադրօն և 48 թնդա-
նօթ, իսկ Սօֆիայի մօտ 34 բառայիւն 14 էս-
կադրօն և 60 թնդանօթ. բոլորը միասին 35,000
մարդ և 5000 ձիաւոր: Բացի դրանից ինչպէս
լսվում է Սօֆիա Բէրկօվաց-Նիշ գծի վրա կանդ-
նած են 25,000 մեծ մասը անկանոն զօրք: Այս
աւելացրած զօրքերի զէժ սուսները իրանց կող-
մից հաւաքել են աւելի մեծ զօրութիւն:

Վ. Պօլիս, նոյեմբերի 30-ին (դեկտեմբ. 12)
Հաւասար հեռագրական ընկերութիւնը հաղոր-
դում է, որ Պէլիսայի ընկերը մեծ ապագորու-
թիւն գործեց Բ. Գրան վրա, կրկին խառում են
մեծ վիզիրի փոփոխութեան մասին: Հաւատաց-
նում են որ Շակիր փաշան հրաման ստացաւ,
յետ քաջվել դէպի Սօֆիա իսկ Մէնէզ-Ալին
փոխվեցաւ նրա համար, որ նա այժ չունենալու
պատճառով հրաժարվեցաւ միանայ Սուլէյմանի
հետ, երբ նա յարձակում էր Տիրսօլի վրա:
Լուր է տարածված իբր թէ Մուխթար-փաշան
նոյնպէս կը փոխվի: Քրիտասեանները, ինչպէս
կրեում է, չեն կամենում այլ ևս քաղաքական
գվարդիա մտնել: Յունաց և Հայոց եկեղեցի-
ների պատերի վրա կայքած են հրակրական
թղթեր զինուորական ծառայութեան զէժ:



ՊԱԼԱՏԱԿԱՆ ՀԱՅՅՈՒՅԹՈՂՆԵՐԸ

Վ.Ա.ՍԻԼ ՊԵՐԼՈՎ

Որդիերանց հետ միասին

(ՅԻՐԱՆ ԳՏՆՎՈՒՄ Է ՄՕՍԿՎԱՅԻՆ)

Պատիւ ունի յայտնել, որ նրանք բացել են թիֆլիսում, Երևանեան հրապարակի վրա, Տեր-
Սասունցի տանը

ԹԵՑԻ ՄԱԿԱԶԻՆ

որտեղ կարելի է գտնել թէյի ամենաբարձր տեսակները, սև թէյ արժէ 1 ռ. 40 կ. մինչև
2 ռ. 50 կ. գոյնաւոր թէյի ֆունտը արժէ 2 ռ. 50 կ. մինչև 5 ռ. կայ նոյնպէս շաքար և
կաֆէ: Մեր թէյի սեփական պահեստները գտնվում են Մոսկվայ, Պետերբուրգ, Վարշավա,
Ռիգա, Սանկտսկի, Օդեսա, Կիևի, Խարկով, Կուրսկ, Օրլա, Տուլ, Սարատով, Վորոնեժ, Տա-
րանսկ, Վիլնա, Նովոռոսիպոլ, Նիժնի-Նովորոսի, Պոլտավա, Կրէմլնուգ, Էլիսավետգրադ,
Կիշինեկ, Ստավրոպոլ և Վլադիկովկաս: Մանրամասն հասցէները յայտնի են տեղական փո-
սային գրասենեակներում:

Ձինաստանի առևտրական տների հետ ուղղի յարաբերութիւն թէյի մեծ քանակու-
թեամբ վաճառելը, տալիս են մեզ կարողութիւն ծածկել թէյի ամենալաւ տեսակից: Թիֆ-
լիսում մենք կը ծածկենք Մոսկվայի քաղաքի, ինչպէս այդ բանը ծախում ենք բոլոր մեր ուրիշ
պահեստներում: Պ. պ. վաճառականներին մանաւանդ այժմ խորհուրդ ենք տալի գնել մեր
թէյը առևտուրի համար:

Վ.Ա.ՍԻԼ ՊԵՐԼՈՎ

Առևտրական տունը Մոսկվայում

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ հայոց կենդանի լե-
զուի ԴԱՍԵՐ և ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ,
Հարցնել մԴՆԱԿ լրագրի խմբագրա-
տանը: 7-10

ЗНАЮЩИЙ ОСНОВАТЕЛЬНО
МУЗЫКУ
пріѣхавъ на дняхъ въ Тифлисъ, желаетъ
давать уроки преимущественно по игрѣ
на фортепіано. Адресъ: Михайловскій
мостъ, домъ Зоммера № 7.

Մանագէտ արուես-
տական ասաններ յի-
նելու և ոսկով պլոմբե-
րու:
Ընդունում է 10 ժա-
մից մինչև 4 ժամ, կա-
րելի է խօսել ամեն լե-
զուներով:

Մոսկվայում ևս ցղու
Կուշնեցկոյ մոստի և Սե-
րովոյ, մոստ Սորոյի,
վходи съ Петровки, про-
тивъ гостини. Франція.

СКЛАДЪ РАЗНЫХЪ СОРТОВЪ
БУМАГИ
помѣщается на углу Вельяминовской улицы,
рядомъ съ конторою газеты «Кавказъ» въ домѣ
Хосроева.
ՉԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐԻ
ՊԱՀԵՍ
գտնվում է Վելյամինովսկոյ փողոցի անկիւ-
նում, «ԿԱՎԿԱՅ» լրագրի խմբագրատան մօտ,
Խօսքովի տանը: 1-3 (1)

На 1878 годъ
ПОДПИСКА
На все газеты и журналы (русскія и ино-
странныя) принимаетъ
Контора объявленій
Н. ВАСМУТЬ И К-о
МОСКВА Мясницкая д. Гагариной
ՄՕՍԿՎԱ Միասնիցկայա փողոց, տուն
Գազարինի
1878 թվի համար
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է ՍՏՈՐԱ-
ԳՐՈՒԹԻՒՆ
բոլոր թէյ ուսաց, թէյ արտասահմանի լրա-
գրիների և ամսագրիների վրա
և ՎԱՍՍՄՈՒՆ ԵՒ ԸՆԿ.
Ցայտարարութիւնների կանոնադրում:
2-5

ԱՆՈՒՆԱՀԱՆՑ ՍԱՊՈՂՆԵՐԻ ԵՒ ԿՕՄՄԵՏԻԿԱ-
ԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՃԱՐԻԿԱ
ՄՕՍԿՎԱՅԻՆ
ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
կարելի է ստանալ սեփական խանութներում
ԵՒԿՈՒՍԿԱՅԱ փողոց, տուն Բոստանդժորո
Ելիսկա փողոց, տուն Թրոյցկոյ պոմբորյա.
Նոյնպէս ՌՈՒՍՍԱՏԱՆԻ ԲՈՒՈՐ ՔԱՂԱՔՆԵ-
ՐՈՒՄ գլխաւոր վաճառականների մօտ:
Պրէյսկուրանտ ուղարկվում է ձրիպպէս:
4 (6)-1

„ՄՁԱԿԻ“ խմբագրատան
մէջ ծախվում է տպելու ԹՈՒՂԹ-
էժան գնով: Տեսնել կարելի է ա-
մեն օր առաւօտները, մինչև 12
ժամ կէսօրի:
Въ редакціи «МШАКЪ» по
случаю продается дешево ком-
ментарная бумага.
5-5

Ստացված են եՕԻԿԱՆԵՐԻ համար այրվող
ԹԵԼԵՐ, ԲԷՆԳԱԼԵԱՆ կրակներ, դուխներ
(հասաւէտ ջեր) օղիզօղան կշռով Վ.
ԳՐԻՎՆԱԿԻ մագաղիւնում:
Получено для ЕЛОКЪ за жигатель-
ныя нитки, бенгалскіе огни, духи,
одеколонъ на вѣсѣ въ магазинѣ В.
ГРИВНАКА. 1-4

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Կենդանիների 15-ին)		ՀԵՆՈՒԳԻՐ		ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ-ԹՈՒՂԻ		ՓՕՍ		«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ			
Բ.	Կ.	Բ.	Կ.	Բ.	Կ.	Բ.	Կ.	Բ.	Կ.		
Ուկրին (պուրականի)	8	25	Կովկասի և Ան- դրկովկասի քա- ղաքները	1	Թիֆլիսի և Միս- թիսի քաղաքները	9	1) Ամեն տեսակ թէյ նա- մակներ, թէյ լրագրիների Ռուսաստան և ար- տասահման ուղարկե- լու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 12 (բացի կիրակի օրերից)	գուլի արակտից՝ երեք- չաբթի և չաբթ օրերը: Երևանի արակտից եր- կուշաբթի, հինգշաբթի և կուշաբթի: Փօթի-թիֆլի- սեան երկաթուղուց ամեն օր: Նույն ու արակ- տից՝ չորեքշաբթի և կի- րակի: Բեռնակրիչի տը- րակտից՝ երեքշաբթի և չա- բթ:	—	—	
Չին 20 կ. 72 պր. 1000 մ.	1180	—	Սուսարիա	2	Միսթիսի քաղաքները	9	2) Բազուրի ճանապարհը՝ թիֆլիս փոստը ընդունվում է երեքշաբթի և ուրբաթ օրերը, իսկ ծանր փոստը երկուշաբթի:	Բաց նամակը ամէ. . .	4	—	—
Վիգորի 50/100 առաջի փո- խուսութեան տու. 100 մ.	230	—	Անգլիա	3	Միսթիսի քաղաքները	9	3) Երևանի արակտը ամեն օր:	Ռուսաստան նամակը	8	—	—
Երկրորդ 50/100 վիգորի 50/100	225	—	Ֆրանսիա	4	Փօթի քաղաքները	9	4) Փօթի-թիֆլիսեան երկաթուղու գիծը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Գերմանիա, Աւստրիա	8	—	—
Մարտի կուրսը 251-	100	—	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	5) Նույն ու արակտը՝ թիֆլիս փոստը ընդունվում է չորեքշաբթի, իսկ ծանր փոստը չաբթ օրերը:	Ֆրանսիա, . . .	8	—	—
Լօնդոնի կուրսը Օդեսայի վրա	9	72	Ֆրանսիա	3	Փօթի քաղաքները	9	6) Բեռնակրիչի ճանա- պարհը՝ ամեն տեսակ փոս- տը ընդունվում է երկուշաբթի և ուրբաթ օրերը:	Նիդրլանդներ	8	—	—
Վենայի կուրսը ամէ 121 գլ.	100	—	Ֆրանսիա	3	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Գարեծի բարաթը . . .	5	35	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Առևտրական բանկի ակ- ցիան 200 մ.	265	—	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Փօթի թիֆլիսեան երկա- թուղու ակցիան 125 մ.	125	—	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Շաքարը բրոցիկ . . .	9	20	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
» միս տեսակը . . .	9	—	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
» շաքարաւաքը . . .	8	60	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
» սրանգլուր . . .	8	60	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
» մաքուր վճարած . . .	13	50	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Բամբակը երկանու Ա- մերիայի սերմից . . .	9	50	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Միս տեսակը հին սերմից . . .	9	—	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Բուրգը թուշի . . .	7	50	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
» թարաքամի . . .	3	50	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Ալիւր Շորպալու . . .	2	—	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
» երևանի . . .	—	—	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Գարին . . .	1	35	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Մոմը բնածարպի (steap) . . .	15	20	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Մետաքս Նուկլայ . . .	157	—	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Կախիթ ունը . . .	100	—	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Կոկոնը Նուկլայ (բոժ) . . .	45	—	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Ֆրիզոնը (լաւր) Ազու- լեաց . . .	52	—	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
Կոֆէն մօկոթ . . .	28	—	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
» լիւանի . . .	—	—	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—
» արտինկոյինը . . .	27	—	Ֆրանսիա	2	Փօթի քաղաքները	9	Ռուսաստանից և ար- տասահմանից արակտը ամեն օր, բացի կիրակի օրերից:	Սերբիա, . . .	8	—	—